Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
սեպտեմբերի 4-ի N 1280-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆԵՐԻ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԻՆՔՆԱԶԲԱՂ ԿԱՄ ԱՆԿԱԽ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ (ՎՃԱՐԵԼՈՒ)

1. Սույն կարգով կարգավորվում են մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին, այդ թվում՝ ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործողներին, խմբերին և իրավաբանական անձանց դրամական խրախուսման (այսուհետ՝ դրամական խրախուսում) վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Դրամական խրախուսման հատկացումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով:

3. Դրամական խրախուսում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող մշակույթի ոլորտի այն գործիչներին, որոնք որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ մասնակցել են N 2 հավելվածում ներառված միջազգային հեղինակավոր փառատոներին և մրցանակաբաշխություններին, ինչպես նաև արժանացել մրցանակի:

4. Ոչ անհատական (խմբային) արդյունքի դեպքում N 2 հավելվածում նշված գումարի չափը բաշխվում է խմբի անդամների միջև հավասարաչափ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ հատկացվում է տվյալ իրավաբանական անձին, որի գործադիր մարմնի որոշմամբ իրականացվում է դրամական խրախուսման բաշխումը:

Եթե տվյալ գործադիր մարմնի իրավասության ներքո գործում են մի քանի ստեղծագործական խմբեր, ապա դրամական խրախուսումը տրվում է այն ստեղծագործական խմբին, որն արժանացել է մրցանակի:

5. Դրամական խրախուսման արժանացած թեկնածուները՝ համապատասխան արդյունքներ գրանցելուց հետո, 12 (տասներկու) ամսվա ընթացքում դրամական խրախուսում ստանալու նպատակով կարող են դիմել նախարարություն՝ դիմումին կից ներկայացնելով միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մրցանակի արժանանալու փաստը հավաստող փաստաթղթեր (դիպլոմ, մրցանակ, հավաստագիր), մասնակցությունը հավաստող փաստաթղթեր (հրավեր, կայքէջերի հրապարակումներ/հղումներ), ինչպես նաև դրամական խրախուսման թեկնածուի անձնական տվյալները (անձնագիր և բանկային հաշվեհամար): Իրավաբանական անձի դեպքում պետք է ներկայացնել նաև Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տված պետական գրանցման վկայականի պատճենը և կազմակերպության բանկային հաշվեհամարը:

6. Դրամական խրախուսման արժանացած թեկնածուների առաջարկությունների հիման վրա ոլորտային համապատասխան ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում նախարարի հաստատմանն են ներկայացվում դրամական խրախուսման ենթակա թեկնածուների ցանկը և համապատասխան ստորաբաժանման եզրակացությունը:

7. Դրամական խրախուսման արժանացած թեկնածուների ցանկը հաստատվում է նախարարի հրամանով, որից հետո նախարարության համապատասխան ստորաբաժանումը 10 աշխատանքային օրվա ընթացքում կնքում է պայմանագիր իրավաբանական անձ հանդիսացող հայտատուի հետ: Հայտատուի կողմից պայմանագրով սահմանված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է հանձնման-ընդունման ակտ: Անհատ ստեղծագործողների դեպքում իրավակարգավորումներն իրականացվում են սույն կետի հրամանի հիմքով:

8. Դրամական խրախուսմամբ նախատեսված վճարումն իրականացվում է ամսական պարբերականությամբ, մեկ տարի ժամկետով՝ համաձայն պայմանագրով

սահմանված ժամանակացույցի, N 2 հավելվածում նշված գումարի չափով, որը չի ներառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարներ: Իրավաբանական անձ հանդիսացող թեկնածուների դեպքում վճարումն իրականացվում է պայմանագիր կնքելուց հետո, իսկ անհատ ստեղծագործող հայտատուների դեպքում վճարման հիմք է հանդիսանում սույն կարգի 7-րդ կետում նշված նախարարի հրամանը:

9. Մեկից ավելի մրցանակ ունենալու դեպքում թեկնածուն վճարվում է դրանցից յուրաքանչյուրի համար:

10. Դրամական խրախուսման արժանացած թեկնածուների հաշվառման նպատակով նախարարությունը ստեղծում և վարում է էլեկտրոնային շտեմարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

05.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ